TREATIES AND OTHER INTERNATIONAL ACTS SERIES 05-317

INTERNATIONAL CRIMINAL COURT

Article 98

Agreement between the

UNITED STATES OF AMERICA

and ARMENIA

Signed at Yerevan October 16, 2004

NOTE BY THE DEPARTMENT OF STATE

Pursuant to Public Law 89—497, approved July 8, 1966 (80 Stat. 271; 1 U.S.C. 113)—

". . .the Treaties and Other International Acts Series issued under the authority of the Secretary of State shall be competent evidence . . . of the treaties, international agreements other than treaties, and proclamations by the President of such treaties and international agreements other than treaties, as the case may be, therein contained, in all the courts of law and equity and of maritime jurisdiction, and in all the tribunals and public offices of the United States, and of the several States, without any further proof or authentication thereof."

ARMENIA

International Criminal Court: Article 98

Agreement signed at Yerevan October 16, 2004;
Entered into force March 17, 2005.

Agreement Between the United States of America and the Republic of Armenia Regarding the Surrender of Persons to International Tribunals

The United States of America and the Republic of Armenia, hereinafter "the Parties,"

Reaffirming the importance of bringing to justice those who commit genocide, crimes against humanity and war crimes;

Considering that the Parties have each expressed their intention to evaluate or investigate available information regarding the facts and where appropriate prosecute war crimes, crimes against humanity and genocide alleged to have been committed by their officials, employees, military personnel or other nationals;

Bearing in mind Article II of the Agreement between the Government of the United States of America and the Government of the Republic of Armenia Regarding Cooperation to Facilitate the Provision of Humanitarian and Technical Economic Assistance of December 15, 1992, and Article 8 of the Agreement between the Government of the United States of America and the Government of the Republic of Armenia Concerning Cooperation in the Area of Counterproliferation of Weapons of Mass Destruction of July 24, 2000, as well as other agreements ("the Agreements") currently in force between the Parties that establish privileges, and the norms of international law applicable in this matter;

Noting that in conformity with the Agreements the persons covered thereunder, including military and civilian personnel, are accorded status equivalent to that accorded to administrative and technical personnel under Vienna Convention on Diplomatic Relations of April 18, 1961 and enjoy immunity from Armenian criminal jurisdiction, as a result of which their surrender, by any means, to an international tribunal not established or authorized by the United Nations Security Council, requires the express consent of the United States of America;

Noting that under international law, persons of the United States of America who enjoy immunity from Armenian criminal jurisdiction, including functional immunity, are not subject, within the terms of that immunity, to Armenian jurisdiction, as a result of which their surrender, by any means, to an international tribunal not established or authorized by the

United Nations Security Council, requires the express consent of the United States of America;

Noting that the term "Sending State" has been used in treaties such as the Vienna Convention on Consular Relations of 1963 and in international law to distinguish among states referenced;

Have herein agreed as follows, with the purpose both to restate existing obligations in this matter and to reach agreement in new areas:

Article 1

For purposes of this Agreement, the term "person" means the nationals of one Party, any current or former government official, employee (including any contractor), or member of the military of one Party, or any person of one Party who enjoys immunity from criminal jurisdiction under international law or who is subject in any manner to the jurisdiction of the Sending State (either the United States of America or the Republic of Armenia).

Article 2

A person of one Party, the Sending State, shall not, absent the express consent of that Party:

a) be surrendered or transferred by any means to any international tribunal for any purpose, unless such tribunal has been established or authorized by the United Nations Security Council, or

b) be surrendered or transferred by any means to any entity or third country, or expelled to a third country, for the purpose of surrender to or transfer to any international tribunal, unless such tribunal has been established or authorized by the United Nations Security Council.

Article 3

When the Republic of Armenia extradites, surrenders, or otherwise transfers a person of the United States of America to a third country, the Republic of Armenia will not agree to the surrender or transfer of that person by the third country to any international tribunal, unless such tribunal has been established or authorized by the United Nations Security

Council, absent the express consent of the United States of America.

Article 4

When the United States of America extradites, surrenders, or otherwise transfers a person of the Republic of Armenia to a third country, the United States of America will not agree to the surrender or transfer of that person by the third country to any international tribunal, unless such tribunal has been established or authorized by the United Nations Security Council, absent the express consent of the Republic of Armenia.

Article 5

This Agreement shall enter into force upon an exchange of notes confirming that each Party has completed the necessary domestic legal requirements to bring this Agreement into force. It will remain in force until one year after the date on which one Party notifies the other of its intent to terminate this Agreement. The provisions of this Agreement shall continue to apply with respect to any act occurring, or any allegation arising, before the effective date of termination.

DONE at Yerevan this sixteenth day of October, 2004, in duplicate, in the English and Armenian languages, both texts being equally authentic.

FOR THE UNITED STATES OF AMERICA: FOR THE REPUBLIC OF ARMENIA:

Համաձայնագիր Ամերիկայի Միացյալ Նահանգների և Հայաստանի Հանրապետության միջև անձանց միջազգային դատարաններ փոխանցելու վերաբերյալ

Ամերիկայի Միացյալ Նահանգները և Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ Կողմեր),

վերահաստատելով ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործություններ և պատերազմական հանցագործություններ կատարած անձանց արդարադատությանը հանձնելու կարևորությունը,

հաշվի առնելով, որ Կողմերից յուրաքանչյուրը արտահայտել է իր մտադրությունը՝ գնահատել կամ քննել փաստերի վերաբերյալ առկա տեղեկությունները և, երբ տեղին է, դատական կարգով հետապնդել պատերազմական հանցագործությունները, ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունները, որոնք, ենթադրաբար, կատարվել են իր պաշտոնատար անձանց, աշխատողների, զինվորական անձնակազմի կամ այլ քաղաքացիների կողմից,

նկատի ունենալով Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև համագործակցության վերաբերյալ մարդասիրական և տեխնիկական տնտեսական օգնության վերահսկումը հեշտացնելու համար 1992 թվականի դեկտեմբերի 15-ի Համաձայնագրի 2-րդ հոդվածը և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև Զանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին 2000 թվականի հուլիսի 24-ի Համաձայնագրի 8-րդ հոդվածը, ինչպես նաև Կողմերի միջև ներկայումս գործող այլ համաձայնագրերը (այսուհետ՝ Համաձայնագրեր), որոնք սահմանում են արտոնություններ, և այս ոլորտում կիրառելի միջազգային իրավունքի նորմերը,

նշելով, որ, Համաձայնագրերին համապատասխան, դրանցով նախատեսված անձանց, ներառյալ զինվորական և քաղաքացիական անձնակազմը, շնորհված են, Դիվանագիտական հարաբերությունների 1961 թվականի ապրիլի 18-ի Վիեննայի Կոնվենցիայի համապատասխան, վարչական և տեխնիկական անձնակազմի կարգավիճակին հավասար կարգավիճակ, և նրանք օգտվում են Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության նկատմամբ անձեռնմխելիությունից, որի արդյունքում նրանց ցանկացած եղանակով փոխանցումը միջազգային դատարաններ, որոնք հիմնված կամ լիազորված չեն Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից, պահանջում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հստակ համաձայնությունը,

նշելով, որ, միջազգային իրավունքին համապատասխան, Ամերիկայի Միացյալ Նահանգների այն անձինք, որոնք օգտվում են Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորության նկատմամբ անձեռնմխելիությունից, ներառյալ ֆունկցիոնալ անձեռնմխելիությունից օգտվողները, որոնք այդ անձեռնմխելիության շրջանակներում ենթակա չեն Հայաստանի Հանրապետության քրեական իրավազորությանը, որի արդյունքում նրանց ցանկացած եղանակով փոխանցումը միջազգային դատարաններ, որոնք հիմնված կամ լիազորված չեն Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից, պահանջում է Ամերիկայի Միացյալ Նահանգների հստակ համաձայնությունը,

նշելով, որ «Ուղարկող Պետություն» հասկացությունը միջազգային պայմանագրերում, ինչպիսին Հյուպատոսական հարաբերությունների մասին 1963 թվականի Վիեննայի կոնվենցիան է, և միջազգային իրավունքում օգտագործված է վկայակոչվող սկզբունքները միմյանցից տարբերակելու նպատակով,

այս հարցով գոյություն ունեցող պարտավորությունները վերահաստատելու և նոր ոլորտներում համաձայնության հասնելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ «անձ» նշանակում է՝ մի Կողմի քաղաքացիներ, կառավարության ներկա կամ նախկին պաշտոնատար անձ, աշխատակից (այդ թվում՝ պայմանագրային), Կողմի զինվորական կամ Կողմի ցանկացած անձ, որը, միջազգային իրավունքին համապատասխան, օգտվում է քրեական իրավազորության նկատմամբ անձեռնմխելիությունից կամ ամեն դեպքում ենթակա է Ուղարկող Պետության իրավազորությանը (Հայաստանի Հանրապետության կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների):

Հոդված 2

Մի Կողմի (Ուղարկող Պետության) անձ, առանց այդ Կողմի հստակ համաձայնության, չպետք է.

ա) հանձնվի կամ ցանկացած եղանակով փոխանցվի ցանկացած նպատակով որևէ միջազգային դատարան, բացառությամբ, եթե այդ դատարանը հիմնվել կամ լիազորվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից, կամ

բ) հանձնվի կամ ցանկացած եղանակով փոխանցվի որևէ այլ մարմին կամ երրորդ պետության կամ վտարվի երրորդ պետություն՝ որևէ միջազգային դատարան հանձնելու կամ փոխանցելու համար, բացառությամբ, եթե այդ դատարանը հիմնվել կամ լիազորվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից:

Հոդված 3

Երբ Հայաստանի Հանրապետությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների անձին երրորդ պետության հանձնի, փոխանցի կամ որևէ այլ կերպ փոխանցի, Հայաստանի Հանրապետությունը չի համաձայնի, որ երրորդ պետությունը որևէ միջազգային դատարան հանձնի կամ փոխանցի այդ անձին՝ առանց Ամերիկայի Միացյալ Նահանգների հստակ համաձայնության, եթե այդ դատարանը չի հիմնվել կամ լիազորվել Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից:

Հոդված 4

Երբ Ամերիկայի Միացյալ Նահանգները Հայաստանի Հանրապետության անձին երրորդ պետության հանձնի, փոխանցի կամ որևէ այլ կերպ փոխանցի, Ամերիկայի Միացյալ Նահանգները չի համաձայնի, որ երրորդ պետությունը որևէ միջազգային դատարան հանձնի կամ փոխանցի այդ անձին՝ առանց Հայաստանի Հանրապետության հստակ համաձայնության, եթե այդ դատարանը չի հիմնվել կամ լիազորվել Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի կողմից:

Հոդված 5

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի ծանուցումների փոխանակման պահից, որոնք կհաստատեն, որ յուրաքանչյուր Կողմ կատարել է Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական իրավական պահանջները: Այն ուժի մեջ կմնա մեկ տարի՝ հաշված այն ժամանակից, երբ մի Կողմը կծանուցի մյուս Կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Սույն Համաձայնագրի դրույթները կշարունակեն գործել մինչև Համաձայնագրի գործողության ժամկետի լրանալը կատարված ցանկացած գործողության կամ առաջադրված ցանկացած մեղադրանքի նկատմամբ:

Կատարված է Երևան քաղաքում 2004 թվականի հոկտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ՝	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝